

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՍՈՒՆ ՄՅԱՍՆԻԿԻ ԲԱԽՇՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐԸ**

ՍԵՂՄԱԳԻՐ

Ը. 00.02. - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ - 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վահանյան Գրիգորի Արշալույսի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Բոստանջյան Վարդան Բաբկենի

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Պարսյան Սուրեն Հակոբի

Առաջատար կազմակերպություն՝

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա


Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. ապրիլի 28-ին, ժամը 15:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0025, ք. Երևան, Աբովյան փող. 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ. մարտի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝



Ա.Ա.Հակոբջանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ներկա աշխարհաքաղաքական և տնտեսական մարտահրավերների համատեքստում մեր երկրի տնտեսական հզորացումը ժամանակի հրամայական է, որն էլ կարևորում է մետալուրգիական արդյունաբերության (ՄԱ) առկա ներուժի ռացիոնալ օգտագործումը և զարգացումը: Հայտնի է, որ մետալուրգիական արդյունաբերությունը շրջակա միջավայրի վրա ամենամեծ բացասական ազդեցություն ունեցող ճյուղերից է, ուստի նրա երկարաժամկետ ու արդյունավետ զարգացումը իրատեսական է միայն կայուն զարգացման հայեցակարգի դրույթներով, այսինքն՝ կայուն զարգացման տնտեսական, էկոլոգիական և սոցիալական բաղադրիչների փոխլրացնող և համալիր զարգացմամբ:

Ոլորտի հիմնախնդիրների բացահայտումը, դրանց լուծմանը նպաստող համապատասխան տնտեսական քաղաքականության ու մեխանիզմների մշակումը, մետալուրգիական արտադրությունների տնտեսական, էկոլոգիական և սոցիալական համալիր տեսանկյունից հիմնավորված ծրագրերի մշակումը առարկայական կրթածնեն ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացումը: Վերոնշյալ, ինչպես նաև շատ այլ գործոններով են պայմանավորված հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերությունն է, իսկ ուսումնասիրության առարկան՝ Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման ուղիների մշակումն ու նախանշումը:

Առաջադրված նպատակն իրագործելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- գնահատել ՀՀ ՄԱ կայուն զարգացման նշանակությունը, տեղը, դերը, զարգացման հանքահումքային հենքը,
- վերլուծել ՀՀ ՄԱ կայուն զարգացման տնտեսական, էկոլոգիական և սոցիալական բաղադրիչները,
- վերլուծել համաշխարհային և հայրենական մետալուրգիական շուկայի կայուն զարգացման ժամանակակից միտումները և կանխատեսումները,
- հարցը դիտարկելով ՀՀ ՄԱ կայուն զարգացման միկրո և մակրո միջավայրերի մակարդակներով՝ բացահայտել ոլորտի ուժեղ և թույլ կողմերը, առկա հիմնախնդիրները, լուծման արդյունավետ ուղիները,
- մշակել ՄԱ կայուն զարգացումը բնութագրող ինդիկատոր,
- բացահայտել ՀՀ ՄԱ կայուն զարգացման հիմնական ուղղություններից մեկի՝ պղնձի արտադրության կազմակերպման էկոլոգիատնտեսական հիմքերը, հիմնական խոչընդոտներն ու խնդիրները և առաջարկել դրանց լուծման

- կոնկրետ և միջազգային պրակտիկայում արդարացված լուծումներ,
- իրականացնել էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիայով պղնձի արտադրության (մետաղների համալիր կորզմամբ) ծրագրի տնտեսական գնահատում, հաշվարկել ծրագրի կանխատեսվող մակրոտնտեսական պոտենցիալ ազդեցությունը,
 - մշակել ՀՀ ՄԱ կայուն զարգացման բարելավման նպատակով ավելացված արժեքի հարկի գործող հարկային մեխանիզմի փուլային բարելավման ուղի, որը կնպաստի մետալուրգիական վերջնարդյունքի՝ մաքուր մետաղի և նրանից պատրաստվող արտադրատեսակների արտադրության խթանմանը:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել ՄԱ կայուն զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հետազոտողների վերլուծությունները, հրապարակումները, հետազոտությունները, ինչպես նաև գիտա-գործնական նշանակություն ունեցող հիմնադրույթները:

Ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Վիճակագրական կոմիտեի (ՀՀ ՎԿ), ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և այլ պետական կառավարման մարմինների պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, Միավորված ազգերի կազմակերպության, Համաշխարհային բանկի, միջազգային մասնագիտացված այլ կազմակերպությունների զեկույցները, հաշվետվություններն ու պաշտոնական հրապարակումները, մետալուրգիական ընկերությունների և մի շարք պաշտոնական վեբկայքերի տեղեկատվությունը:

Ատենախոսությունում վերլուծությունն իրականացվել է վիճակագրական համեմատական վերլուծության, անալիզի և սինթեզի, տրամաբանական մտահանգման, ամփոփումների, կանխատեսումների և այլ մեթոդներով:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Հետազոտության արդյունքում ստացվել են գիտագործնական նշանակության արդյունքներ, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

1. մշակվել է ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացումը բնութագրող ինտեգրալ ինդիկատոր,
2. հիմնավորվել են ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները պղնձի արտադրության շեշտադրությամբ, իրականացվել է էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիայով պղնձի արտադրության ծրագրի (մետաղների համալիր կորզմամբ) տնտեսական գնահատում, հաշվարկվել է ծրագրի մակրոտնտեսական պոտենցիալ ազդեցությունը,
3. առաջարկվել է ՀՀ-ում պղնձի արտադրության կազմակերպման հիմնական էկոլոգիատնտեսական խոչընդոտներից մեկի՝ ծծմբի իրացման մարքեթինգային լոգիստիկ խնդրի լուծում,
4. մշակվել է ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման բարելավման նպատակով ավելացված արժեքի հարկի գործող հարկային մեխանիզմի բարելավման ուղի, որը կխթանի մետալուրգիական վերջնարտադրանքների արտադրությունը:

Հետազոտության արդյունքների գիտա-գործնական նշանակությունը և կիրառությունը: Իրականացված հետազոտությունների արդյունքում առաջարկված տեսամեթոդական մոտեցումներն ու որպես գիտական նորույթ ներկայացված դրույթները կարող են նպաստել կայուն զարգացման տեսության համատեքստում ՄԱ դիտարկվող հիմնախնդիրների մշակվածության բարձրացմանը, իսկ այդ հիմնախնդիրների լուծման համար առաջարկված մոտեցումներն ու ուղիները կարող են օգտագործվել «Օրենսդիր և գործադիր մարմինների, մետալուրգիական ընկերությունների կողմից» ոլորտի տնտեսաէկոլոգիական երկարաժամկետ կայուն զարգացումն ապահովելու նպատակով: «ՄԱ կայուն զարգացումը բնութագրող մշակված ինտեգրալ ինդիկատորի միջոցով կարելի է գնահատել ոլորտի և առանձին ընկերությունների կայունության մակարդակը: Պղնձի արտադրության ծրագրի տնտեսական հիմնավորումը կարող է օգտակար լինել ներդրողներին և որոշում կայացնողներին՝ ծրագրի իրական գրավչությունը որոշելու գործընթացում: Պղնձի արտադրության էկոլոգիատնտեսական խոչընդոտների հաղթահարման կազմակերպման ուղղությամբ հեղինակի մարքեթինգային լոգիստիկ առաջարկությունը՝ կապված ծծմբի իրացման խնդրի հետ, կարող է էապես լուծել դիտարկվող հիմնախնդիրը և նպաստել ՀՀ-ում պղնձի արտադրության կազմակերպմանը: Արտահանմանն ուղղված ավելացված արժեքի հարկի հետ դարձի մեխանիզմի փուլային բարելավումը պետության կողմից համապատասխան հարկային քաղաքականությամբ կիրառելու դեպքում ընկերությունների համար կստեղծվեն իրական խթաններ մետաղական շրջափուլն ապահովելու ուղղությամբ:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության հիմնադրույթները և ստացված արդյունքները զեկուցվել և քննարկվել են Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի տարեկան գիտաժողովներում, Սանկտ-Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարանում (ՌԴ) 2022թ. կայացած «Կայուն զարգացումը գլոբալ մարտահրավերների պայմաններում» IV միջազգային գիտաժողովում, Տամբովի պետական տեխնիկական համալսարանում (ՌԴ) 2019թ. կայացած «Ռուսաստանի տնտեսական անվտանգության սպառնալիքներին հակազդեցության ռազմավարությունները» II համառուսական գիտաժողովում, 2019թ. կայացած «Տարածաշրջանի սոցիալտնտեսական և էկոլոգիական համակարգերի հետազոտության վիճակագրական մեթոդները» III միջազգային գիտագործնական համաժողովում, 2020թ. և 2021թ. կայացած «Տարածաշրջանների սոցիալտնտեսական զարգացման հետազոտությունը պատժամիջոցների և գլոբալ մարտահրավերների պայմաններում» I և II միջազգային մասնակցությամբ համառուսական գիտագործնական համաժողովներում, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի գիտական սեմինարներում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունը արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 16 (տասնվեց) գիտական հոդվածներում, որոնցից 6-ը (վեց)՝ առանց համահեղինակի:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունների բաժնից, օգտագործված

գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը շարադրված է 168 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը, առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, ներկայացվել են ուսումնասիրության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գիտա-գործնական նշանակությունը և կիրառությունը, ատենախոսության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության առաջին՝ **«ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնահարցերը և ժամանակակից միտումները»** գլխում հիմնավորվել է ՀՀ ՄԱ կայուն զարգացման անհրաժեշտությունը, ներկայացվել են կայուն զարգացման էությունը, բաղադրիչները, ձևերը, ինչպես նաև դրանց դրսևորման առանձնահատկություններն ու միտումները ՀՀ մետալուրգիական արդյունաբերության ոլորտում: Ատենախոսության այս գլխում ուսումնասիրվել են ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման՝ տնտեսական, էկոլոգիական և սոցիալական բաղադրիչները:

Մետաղական հարուստ բնական պաշարներ և կայացած հանքարդյունաբերություն ունեցող Հայաստանի Հանրապետությունը ներկայումս շարունակում է մնալ արտահանման ամենամեծ մասնաբաժինն ունեցող¹ (միջինում 56%) հանքարդյունաբերական հումք և մետալուրգիական կիսաարտադրանք արտահանող երկիր՝ դրանից բխող տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, ինչպես նաև աշխարհաքաղաքական նշանակությամբ և հիմնախնդիրներով: ՀՀ մետալուրգիական արդյունաբերությունը իրատեսական և երկարաժամկետ զարգացում կարող է ապահովել զարգացման այն ձևով, որի սկզբունքներով առաջնորդվելը կապահովի շրջակա միջավայրի վրա նվազագույն բացասական ազդեցություն և միաժամանակ տնտեսական և սոցիալական բարձր արդյունավետություն: Զարգացման այդպիսի ձևը բնութագրական է կայուն զարգացմանը, որի դրույթներին հետևելը դարձել է ժամանակի հրամայական:

«Կայուն զարգացումն այնպիսի զարգացում է, որը բավարարում է ներկա ժամանակաշրջանի պահանջմունքները՝ առանց վրանգի փակ դնելու ապագա սերունդների սեփական պահանջմունքների բավարարման հնարավորությունները (Բրունդտլանդ Գ. Խ., 1987թ.)»²: Կայուն զարգացման հայեցակարգն առաջացել է 3

¹ ՀՀ արտահանման և ներմուծման կառուցվածքը արտաքին և փոխադարձ առևտրում (2020-2021թթ.), <https://petekamutner.am/Content.aspx?itn=csCIForeignTradeByProducts> (վերջին մուտքը՝ 03.06.2022)

² «Наше общее будущее»: Доклад Международной комиссии по окружающей среде и развитию (МКОСР): Пер. с англ. / Под ред. и с послесл. С. А. Евтеева и Р. А. Перелета. – М.: Прогресс, 1989. – С. 50.

հիմնական՝ տնտեսական, սոցիալական և էկոլոգիական բաղադրիչների միավորումից: Անցումը դեպի կայուն զարգացում ենթադրում է ներքոնշյալ գործընթացների իրականացումը՝

- տնտեսական արդյունավետության ապահովում,
- սոցիալական արդարության հասնում,
- բնապահպանական հրամայականների իրագործում.

որոնք միայն միասին կարող են երաշխավորել կայունության սին էներգետիկ ազդեցությունը³:

Ըստ հեղինակի բնորոշման՝ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացում նշանակում է բնապահպանական բաղադրիչի ելակետային ապահովման պայմաններում բարձր արդյունավետությամբ փնտրեսական զարգացում, որն իրական հիմքեր կստեղծի սոցիալական բաղադրիչի պարզաձև իրականացման համար:

Համաշխարհային մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման գործընթացում Հայաստանն ունի պոտենցիալ աճող մասնաբաժին: 2020թ. Հայաստանը մետաղական և այլ օգտակար հանածոների արտադրատեսակների արտադրության գլոբալ շուկայում բնեղեն արտադրանքի ծավալներով արձանագրել է 0,98% մասնաբաժին՝ 104024 տոննա մետաղական արտադրանքի ցուցանիշով և գրավել 134-րդ տեղը աշխարհի երկրների ցանկում (92 հազ. տոննա գունավոր մետաղներ (հիմնականում պղինձ՝ 83 հազ. տոննա), 12 հազ. տոննա ֆեռոհամաձուլվածքներ ու 24 հազ. կգ թանկարժեք մետաղներ, այդ թվում՝ ոսկի՝ 5317 կգ, արծաթ՝ 19493 կգ): Արժեքային արտահայտությամբ՝ ՀՀ մետաղական և այլ օգտակար հանածոների արտադրատեսակների գումարային արժեքը կազմել է 1 մլրդ 96 մլն ԱՄՆ դոլար, որի 99%-ը կազմում է մետաղական արտադրանքը՝ 1 մլրդ 86 մլն ԱՄՆ դոլար՝ ապահովելով Հայաստանի դիրքը 101-րդ հորիզոնականում⁴: Բերված ցուցանիշները վկայում են, որ հարուստ հանքահումքային հենք ունեցող Հայաստանը դեռևս հեռու է այս ոլորտում իր պոտենցիալ մակարդակը իրացնելու նշագծից:

Հարկ է նշել, որ ինչպես արտացոլված է աղյուսակ 1-ում, Հայաստանի մետաղական արտադրությունը ներկայացնում են մոլիբդենը, պղինձը, ոսկին, արծաթը, ցինկը և ռենիումը, չնայած ընդերքում և արդյունահանված հանքաքարում

³Мкртчян С.А., Бахсян С.М. /Проблемы устойчивого развития горно-металлургической отрасли Армении /Стратегии противодействия угрозам экономической безопасности России: материалы II Всероссийского форума по экономической безопасности, Тамбов, 5–6 июня 2019 г.- Тамбов: Изд.центр ФГБОУ ВО "Тамбовский государственный технический университет", 2019. – Вып. 2, С. 11.

⁴ World Mining Data 2022, Iron and Ferro-Alloy Metals, Non-Ferrous Metals, Precious Metals, Industrial Minerals, Mineral Fuels, Volume 37 С. Reichl, M. Schatz Minerals Production Vienna, 2022, էջ 46-48. <https://www.world-mining-data.info/wmd/downloads/PDF/WMD2022.pdf> (վերջին մուտքը՝ 25.08.2022)

առկա են համարյա բոլոր հայտնի մետաղները, սակայն դեռևս չեն կորզվում՝ պայմանավորված տեխնոլոգիական, ներդրումային և այլ գործոններով:

Տիրապետելով մոլիբդենի համաշխարհային պաշարների 4,6%-ին՝ Հայաստանը աշխարհում մոլիբդեն արտադրող 15 երկրների շարքում զբաղեցրել է 6-րդ տեղը 4,2% մասնաբաժնով՝ 11909 տոննա բնեղեն ծավալով: ՀՀ արտահանման կառուցվածքում մետալուրգիական արտադրանքներից ամենամեծ մասնաբաժին ունի ֆերոմոլիբդենը: 2021թ. տվյալներով ՀՀ-ից արտահանվել է 8159,2 տոննա ֆերոմոլիբդեն, որը կազմել է 188739,2 հազ. ԱՄՆ դոլար և ապահովել 4-րդ տեղն արտահանման ցանկում:

Աղյուսակ 1

ՀՀ մետաղական արտադրանքի ծավալների դինամիկան ըստ մետաղների տեսակների 2016-2020թթ., զբաղեցրած դիրքը համաշխարհային արտադրությունում 2020թ-ին⁵


| Դիրքը | Մետաղի տեսակը | Չափման միավորը | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | Փոփոխությունը 2020թ-ին 2016թ-ի նկատմ. | Փոփոխությունը 2020թ-ին 2019թ-ի նկատմ. |
|-------|---------------|----------------|-------|-------|-------|-------|-------|---------------------------------------|---------------------------------------|
| 6 | Մոլիբդեն | տոննա | 5771 | 5038 | 5422 | 7137 | 11909 | 106,36 | 66,86 |
| 25 | Պղինձ | տոննա | 95080 | 95793 | 68928 | 91214 | 83291 | -12,40 | -8,69 |
| 45 | Ցինկ | տոննա | 4960 | 6070 | 6946 | 7162 | 8684 | 75,08 | 21,25 |
| 52 | Ոսկի | կգ | 3732 | 4670 | 4967 | 5825 | 5317 | 42,47 | -8,72 |
| 38 | Արծաթ | կգ | 14100 | 17200 | 16700 | 17922 | 19493 | 38,25 | 8,77 |
| 8 | Ռենիում | կգ | 280 | 260 | 280 | 310 | 260 | -7,14 | -16,13 |

Պղնձի գծով մեր երկիրը տիրապետում է համաշխարհային պաշարների 1%-ին, իսկ բնեղեն ծավալներով գլոբալ արտադրությունում զբաղեցնում է 25-րդ հորիզոնականը, հայրենական հանքագործական արտադրությունում և արտահանման կառուցվածքում՝ բացարձակ առաջատարի դիրքը: Ներկայումս ՀՀ-ում հայրենական հումքով արտադրվող հիմնական մետաղական արտադրատեսակներն են՝ ֆերոմոլիբդենը և մոլիբդենի խտանյութը, պղնձի խտանյութը, ոսկու և արծաթի պարունակությամբ Դորե համաձուլվածքը, թանկարժեք մետաղների պարունակությամբ ոսկու խտանյութը, ցինկի խտանյութը,

⁵ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից նախորդ աղբյուրի տվյալներով՝ էջ 158, 165, 169, 171, 172, 175, 201:

ոննիումի աղը, որոնցից մետալուրգիական արտադրանք են հանդիսանում *Ֆերոմոլիբդենը, Դորե համաձուլվածքը և ուննիումի աղը*: Հարկ է նկատել, որ բոլոր արտադրատեսակներն էլ վերջնական մաքուր մետաղներ չեն և ենթակա են հետագա մետալուրգիական վերամշակման:

«Վիճակագրական կոմիտեի ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգմամբ՝ «Վ մետալուրգիական արդյունաբերությունն ընդգրկված է մշակող արդյունաբերության մեջ՝ «Հիմնային մետաղների արտադրություն» և «Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն, բացի մեքենաներից և սարքավորանքից» արդյունաբերական արտադրանքի բաժիններով: «Վ մետալուրգիական արդյունաբերության արտադրանքի արտադրության դինամիկան և աճի ցուցանիշները 2010-2021թթ. բերված են գծ. 1-ում:



Գծապատկեր 1. «Վ մետալուրգիական արդյունաբերության արտադրանքի դինամիկան և աճի տեմպերը 2010-2021թթ.⁶

Դիտարկվող ժամանակահատվածում «Վ ՄԱ արտադրանքի ծավալները հիմնականում ունեցել են աճի միտում և առանձին տարիներին ընթացիկ գներով արտադրանքի արտադրության դինամիկայի բացասական միտումը պայմանավորված է եղել միջազգային շուկայում մետաղների գների անկմամբ: 2020-2021թթ. կտրվածքով 6 %-ով անկումն արդյունք է համաշխարհային շուկայում կորոնավիրուսի համաճարակի հետ պայմանավորված մետալուրգիական արտադրանքի նկատմամբ պահանջարկի կրճատման գործընթացով, ինչպես նաև այն հանգամանքով, որ Հայաստանի ոսկու ամենահարուստ Սոթքի հանքավայրը շահագործող «ԳեոՊրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ն, որն արտադրում է ոսկու և արծաթի

⁶ Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ «Վ վիճակագրական կոմիտեի, https://armstatbank.am/pxweb/hv/ArmStatBank/ArmStatBank_3%20Industrv.%20Construction.%20Otrade%20and%20services_32%20Industry/IC-in-a.px/?rxid=10fe690f-50e8-4832-97d3-88cff599400a և [sv_09_21a_121 \(armstat.am\)](https://armstatbank.am/pxweb/hv/ArmStatBank/ArmStatBank_3%20Industrv.%20Construction.%20Otrade%20and%20services_32%20Industry/IC-in-a.px/?rxid=10fe690f-50e8-4832-97d3-88cff599400a) աղբյուրների տվյալներով:

Դորե ձուլակտորներ, հնարավորություն չի ունեցել աշխատելու լրիվ հզորությամբ, քանի որ ոսկու հանքավայրի մի մասն անցել է Ադրբեջանի տիրապետության տակ, իսկ Հայաստանի տիրապետության տակ մնացած հատվածում խաթարվել են ընկերության բնականոն գործունեության պայմանները: Արդյունքում վերջին տարիներին իջել են ոսկու և արծաթի արտադրության առաջատար ընկերության բոլոր արտադրատնտեսական ցուցանիշները, որն էլ ազդել է մակրո ցուցանիշների վրա:

«ՄԱ մակրոտնտեսական ցուցանիշները 2020-2021թթ. ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

«ՄԱ մետալուրգիական արդյունաբերության մակրոտնտեսական ցուցանիշները»⁷

| № | Ցուցանիշը | 2021թ. | 2020թ. | Փոփոխությունը 2021թ/ 2020թ, % |
|-----|--|-----------|-----------|----------------------------------|
| 1. | Մետալուրգիական արդյունաբերություն, ՄԱ, մլն դրամ | 197 901,4 | 210 487,7 | -6,0 |
| 2. | ՄԱ մասնաբաժինը ՀՆԱ-ում, % | 2,8 | 3,4 | -0.6 |
| 3. | ՄԱ մասնաբաժինը արդյունաբերությունում, % | 8,2 | 10,0 | -1,8 |
| 4. | ՄԱ մասնաբաժինը մշակող արդյունաբերությունում, % | 13,0 | 14,9 | -1,9 |
| 5. | ՄԱ խոշոր հարկատուների վճարած հարկերը, մլն դրամ | 40 312 | 41 166 | -2,1 |
| 6. | ՄԱ մասնաբաժինը հարկային մուտքերում, % | 2,54 | 2,97 | -0,43 |
| 7. | Զբաղվածների քանակը, մարդ | 5 530 | 4 525 | +22,3 |
| 8. | Տնտեսվարող սուբյեկտների քանակը, հատ | 184 | 182 | 0,01 |
| 9. | Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ | 365 178 | 350 320 | +4,2 |
| 10. | ՄԱ մասնաբաժինը արտահանման մեջ, % | 22,7 | 24,6 | -1,9 |
| | ՄԱ և հանքարդյունաբերության մասնաբաժինը արտահանման մեջ, % | 55,6 | 56,0 | -0,4 |

⁷ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2022, Եր., «ՎԿ, 2022թ.-628 էջ, «ՎԿ պետական եկամուտների կոմիտե, <https://petekamutner.am/Content.aspx?itn=tsTILlists> և <https://petekamutner.am/Content.aspx?itn=csCIForeignTradeByProducts> աղբյուրների հիման վրա ատենախոսության մեջ կատարված վերլուծությունների արդյունքում:

Տարբեր գնահատականներով աշխարհում արտանետումների 7-9%-ը բաժին է ընկնում սև և գունավոր մետալուրգիային: Մետալուրգիական արդյունաբերության էկոլոգիական բացասական ազդեցության մյուս ուղղությունը ջրային համակարգի վրա ունեցած ազդեցությունն է: Գունավոր մետալուրգիայի ձեռնարկությունների կեղտաջրերի առանձնահատկությունն այն է, որ դրանք պարունակում են մեծ քանակությամբ ծանր մետաղներ, որոնք ներքևի նստվածքներում և սննդի շղթաներում կուտակվելու հատկություն ունեն: Ավալերդու պղնձածուլարանը 2018թ. ամռանը դադարեցրել է իր արտադրատնտեսական գործունեությունը էկոլոգիական հիմնախնդրի պատճառով: Պղնձածուլարանի փակումից հետո շուրջ 5 անգամ նվազել է Լոռու մարզի արտանետումների ցուցանիշը, 40%-ով նվազել է ՀՀ-ում արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը (2020թ-ը 2017թ-ի հետ համեմատած)⁸:

ՀՀ մետալուրգիական արդյունաբերության ոլորտում տնտեսական ցուցանիշների հզորացմանը զուգընթաց արձանագրվում են սոցիալական դրական տեղաշարժեր՝ զբաղվածության աճի դինամիկա (5 530 աշխատող), միջին աշխատավարձի բարձր մակարդակ (365 178 դրամ, որը գերազանցում է տնտեսության միջին ցուցանիշը մոտ 1,8 անգամ), հավաքագրվող հարկերի և վճարների նշանակալից մակարդակ (հարկային մուտքերի 2,54%), որոնց մի մասը վերաբաշխվում է հասարակության աղքատ խավերին՝ նպաստների, թոշակների ձևով և սոցիալական բաղադրիչի այլ դրսևորումներ:

Ատենախոսության երկրորդ՝ **«Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման առկա իրավիճակի ուսումնասիրություն»** գլխում ուսումնասիրվել են ՀՀ մետալուրգիական արդյունաբերության հայրենական հումքով զարգացող հիմնական ուղղությունների՝ մոլիբդենի, ոսկու և պղնձի ոլորտների, ինչպես նաև ներկրվող հումքի՝ ալյումինի և պողպատի ոլորտների զարգացման առկա իրավիճակը և զարգացման միտումները: Ներկայացվել են կայուն զարգացման ինդիկատորները և մշակվել է ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայունությունը գնահատող ինտեգրալ ինդիկատոր:

ՀՀ մետալուրգիական արդյունաբերության մոլիբդենի, ոսկու և պղնձի ինչպես նաև ներկրվող հումքով զարգացող ոլորտների առկա իրավիճակի ուսումնասիրությունն իրականացվել է հանքահումքային հենքի, մետաղական պաշարների հիմնավորման, արտադրության և սպառման ուսումնասիրության, ոլորտի և նրա հիմնական ընկերությունների արտադրատնտեսական և ֆինանսական հիմնական ցուցանիշների վերլուծության, էկոլոգիական և սոցիալական բաղադրիչների ուսումնասիրության, ինչպես նաև ապագայական

⁸ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն, Արտանետումներ, <http://www.mnp.am/shrjaka-mijavayr/artanetumner> (վերջին մուտքը՝ 15.07.2022)

զարգացումների և կանխատեսումների կտրվածքով՝ կայուն զարգացման համատեքստում:

Կայուն զարգացումը չափելու համար ավանդական ցուցանիշների (ՀՆԱ, ՀԱԱ և այլն) փոխարեն անհրաժեշտ են այնպիսի ճշգրտված ցուցանիշներ, ինչպիսիք են կայուն զարգացման ինդիկատորները, որոնք թույլ են տալիս դատել տնտեսական, սոցիալական կամ բնապահպանական փոփոխականի վիճակի կամ փոփոխության մասին: Հեղինակը փորձել է Համաշխարհային բանկի առաջարկած մեթոդաբանության սկզբունքներով, որը հիմնված է շրջակա միջավայրի աղտոտման էկոտնտեսական վնասը հաշվի առնելու մոտեցման վրա՝ մշակել մետալուրգիական արդյունաբերության ձեռնարկությունների և ոլորտի կայուն զարգացումը բնութագրող «կանաչ» ինդիկատոր: Հեղինակը ինդիկատորի մեծության մեջ ընդգրկել է նաև կայուն զարգացման սոցիալական բաղադրիչը բնութագրող ցուցանիշ, որն ինդիկատորը դարձնում է ինտեգրալ, քանի որ հնարավորություն է տալիս գնահատել կայուն զարգացման մակարդակն ըստ բոլոր բաղադրիչների: Առաջարկվող ինտեգրալ ինդիկատորը հաշվարկում է հետևյալ բանաձևով.

$$\text{«Կանաչ ՄԱ»} = \text{ՀԱ} - \text{ԲՎ} + \text{ՍԾ},$$

որտեղ «Կանաչ ՄԱ»-ն մետալուրգիական արդյունաբերության համախառն արտադրանքի կամ մետալուրգիական ընկերության համախառն արտադրանքի «Կանաչ» ճշգրտված ինդիկատորն է,

ՀԱ-ն՝ մետալուրգիական արդյունաբերության կամ մետալուրգիական ընկերության համախառն արտադրանքն է (հասույթ) արժեքային արտահայտությամբ,

ԲՎ-ն՝ մետալուրգիական արդյունաբերության կամ մետալուրգիական ընկերության կողմից շրջակա միջավայրին հասցրած բնապահպանական վնասն է, որը ՀՀ օրենսդրությամբ չափվում է բնապահպանական հարկի և վճարված տույժերի ու տուգանքների գումարով,


ՍԾ-ն՝ մետալուրգիական արդյունաբերության կամ մետալուրգիական ընկերության կողմից կատարվող սոցիալական բնույթի կամավոր և օրենքով սահմանված ծախսերն են:

Հաշվարկվել է «ԳեոՊրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի «Կանաչ ՄԱ»-ն, որը ցույց է տվել ընկերության կայուն զարգացման մակարդակը:

Ատենախոսության երրորդ՝ **«Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման բարելավման հիմնական ուղիները»** գլխում ուսումնասիրվել են ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման բարելավման պղնձի արտադրության գործոնը, ոլորտի հենքով կայուն զարգացող տնտեսության ճյուղերի գործունեությունը որպես կայունության բարձրացման ուղի, ինչպես նաև մշակվել է Հայաստանի Հանրապետությունում մետալուրգիական վերջնարտադրանքների արտադրությունը խթանող հարկային մեխանիզմի բարելավման փուլային ուղի: Դիտարկվել են մետալուրգիական նորագույն և ապագայական տեխնոլոգիաների կիրառման ուղղությունները ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման բարելավման գործընթացում:

ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման բարելավման պղնձի արտադրության գործոնի ուսումնասիրության նպատակով հիմնավորվել են ՀՀ-ում պղնձի արտադրության կազմակերպման նպատակահարմարությունը, նշանակությունը և հիմնական խնդիրները, բացահայտվել են պղնձի արտադրության կազմակերպման էկոլոգիատնտեսական հիմքերը, հիմնական խոչընդոտները և առաջարկվել է պղնձի արտադրության տեխնոլոգիական արգասիք հանդիսացող ծծմբի իրացման խնդրի միջազգային պրակտիկայում արդարացված լուծում, իրականացվել է էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիայով պղնձի արտադրության ծրագրի տնտեսական գնահատում, հաշվարկվել է ծրագրի կանխատեսվող մակրոտնտեսական պոտենցիալ ազդեցությունը:

Մետալուրգիական վերջնարդյունք ստանալու երկրի ծրագրերից մեկը տարեկան 100 000 տոննա կաթոդային պղնձի արտադրության կազմակերպումն է և տեղական 24-25%-ոց պղնձի խտանյութի հումքով աշխատելու դեպքում տարեկան միջին հաշվով անհրաժեշտ է 400-430 հազ. տոննա պղնձի խտանյութ:



Գծապատկեր 2. Պղնձի խտանյութի արտադրության փաստացի և կանխատեսվող ծավալները ՀՀ-ում՝

2018-2021թթ. Հայաստանում արտադրված պղնձի խտանյութի ծավալների դինամիկայի հիման վրա հեղինակի կողմից կատարված գծային կանխատեսման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պղնձի խտանյութի արտադրության ծավալները առաջիկա 3 տարիներին կգերազանցեն 430 հազ. տոննայի նշագիծը:

Պղնձի արտադրության գնահատվող ծրագիրը նախատեսում է էկոլոգիապես մաքուր պիրոհիդրոմետալուրգիական համակցված տեխնոլոգիա, որի դեպքում որպես հարակից, տեխնոլոգիապես պարտադրված արտադրանք ստացվում է ծծումբ, որն ունի իրացման խնդիր, քանի որ համաշխարհային շուկայում նրա պահանջարկը զգալիորեն փոքր է առաջարկից: Հեղինակը իրատեսական լուծման տարբերակ է առաջարկում համաշխարհային պրակտիկայում նման

⁹Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ՎԿ, Երևան, 2022թ., էջ 325 աղբյուրի տվյալներով:

իրավիճակներում արդարացված լուծումներից մեկը, որի դեպքում «եկամտային» հողվածք վերածվում է «ծախսային» հողվածի: Արտադրողը ծծումբը «նվիրում է» գնորդին, զիջելով նրան շահույթի մի մասը, սակայն փոխարենը հնարավորություն է ստանում իրականացնել անընդհատ արտադրական գործունեություն՝ ազատվելով իրացվելիություն չունեցող պաշարներից: Ծրագրի եկամտաբերության մակարդակը պղնձի վերջին տարիների միջին գնի պայմաններում թույլ է տալիս խնդիրը լուծել այդ տարբերակով՝ ապահովելով բավարար շահութաբերություն:

Պղնձի արտադրության ծրագրի իրականացման դեպքում տարեկան կարտադրվի՝ Ա դասի պղինձ՝ 98478 տոննա/տարի, ստանդարտ պղինձ՝ 986 տոննա/տարի, ծծումբ՝ 134388 տոննա/տարի, ոսկու ձուլակտոր՝ 654 կգ, արծաթի ձուլակտոր՝ 16696 կգ: Ծրագրի իրականացման դեպքում կանխատեսվող հիմնական ցուցանիշները վկայում են պղնձի արտադրության կազմակերպման արդյունավետության մասին (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Կաթոդային պղնձի արտադրության ծրագրի հիմնական ցուցանիշները¹⁰

| № | Ցուցանիշը | Արժեքը, հազ. ԱՄՆ դոլ. ¹¹ . | Արժեքը, հազ. ՀՀ դր. |
|---|--|--|------------------------|
| 1 | Արտադրանքի իրացումից հասույթը | 895 599,43 | 362 717 783,9 |
| 2 | Իրացված արտադրանքի ինքնարժեքը | 799 678,87 | 323 869 930,2 |
| 3 | Շահույթը հարկումից առաջ | 95 920,56 | 38 847 853,7 |
| 4 | Շահութահարկ, 18% | 17 265,70 | 6 992 613,7 |
| 5 | Զուտ շահույթը, մլն.դր. | 78 654,86 | 31 855 240,0 |
| 6 | Աշխատավարձի ֆոնդ | 8 544,0 | 3 460 320,0 |
| 7 | Եկամտային հարկ | 1 794,2 | 726 667,2 |
| 8 | Կաթոդային պղնձի արտ. ծրագրի կապիտալ ներդրումները | 614 974 ,0 | 249 064 470,0 |
| 9 | Կապիտալ ներդրումների ետզնման ժամկետը | 7,8 տարի | 7,8 տարի |

Կաթոդային պղնձի արտադրության ծրագրի իրականացման արդյունքում, 2021թ. ելակետային տվյալներով հաշվարկված, ՀՀ մետալուրգիական արդյունաբերության արտադրանքի ծավալները կբազմապատվեն ավելի քան 2,8

¹⁰ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հետազոտության մեջ կատարված հաշվարկների արդյունքներով:

¹¹ Կիրառվող փոխարժեքի կուրսն ընդունվել է՝ 1 ԱՄՆ դոլար = 405 դրամ:

անգամ և 197901,4 մլն դրամից կհասնեն 560619,2 մլն դրամի, ոլորտի մասնաբաժինը կբարձրանա ՀՆԱ-ում՝ 2,8%-ից մինչև 7,6%, արդյունաբերությունում՝ 8,2%-ից մինչև 20,2%, մշակող արդյունաբերությունում 13,0%-ից մինչև 29,7%, հարկային մուտքերում՝ 2,5%-ից մինչև 3,0% (հարկերի արժեքի մեջ հաշվարկված են միայն շահութահարկը և եկամտային հարկը): ՀՀ մետալուրգիական արդյունաբերությունում աշխատողների միջին տարեկան թվաքանակը կավելանա 765 աշխատողներով և 5530 աշխատողից կհասնի 6295-ի:

ՀՀ-ում մետաղական ավարտուն շրջափուլը ապահովելու նպատակով հեղինակն առաջարկում է ՀՀ Հարկային Օրենսգրքով ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների և գործառնությունների ցանկից փուլային եղանակով հանել նախ մետաղական շրջափուլի հումքային արտադրանքները՝ հանքաքարը, խտանյութը, իսկ հաջորդ փուլում՝ մետալուրգիական միջանկյալ արտադրատեսակները՝ արտոնությունը թողնելով միայն վերջնարտադրանքների՝ մաքուր մետաղի և դրանից պատրաստվող արտադրատեսակների վրա: Մետալուրգիական միջանկյալ արտադրատեսակների նկատմամբ արտոնությունը նպատակահարմար է պահպանել առաջին հինգ տարիների կտրվածքով՝ վերջնարտադրանքի արտադրությամբ գործարանների կառուցման և շահագործման նկատառումներով:

ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությունը և դրանց լուծումների վերաբերյալ առաջարկությունները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները:

✓ ՀՀ մետալուրգիական արդյունաբերությունը երկարաժամկետ զարգացում ապահովող ոլորտ է, որը պայմանավորված է հանքահումքային հարուստ ներուժով, միջազգային շուկայում բարձր և աճող պահանջարկ ունեցող մետաղական արտադրանքով, սակայն ներկայումս մետաղների ստացման ավարտուն շրջափուլերի և մետալուրգիական ավելի բարձր տեխնոլոգիական արտադրանքների բացակայությունը երկիրը զրկում է մակրո և միկրո մակարդակներում տնտեսական ու սոցիալական զարգացման պոտենցիալ աճից: Մետալուրգիական արդյունաբերությունը շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող ճյուղերից է: Նրա երկարաժամկետ ու արդյունավետ զարգացումը իրատեսական է միայն կայուն զարգացման հայեցակարգի դրույթներով, այսինքն՝ կայուն զարգացման տնտեսական, էկոլոգիական և սոցիալական բաղադրիչների համահունչ, փոխլրացնող և համալիր զարգացմամբ: Հայաստանի ներկա տնտեսական, անվտանգային հիմնախնդիրների լուծումը պահանջում է առկա ռեսուրսների օպտիմալ օգտագործում, որի միջազգային լավագույն փորձով հիմնավորված ուղիներից մեկը մետաղական հարուստ ռեսուրսների և կայացած հանքարդյունաբերության հենքով ՀՀ մետալուրգիական արդյունաբերության զարգացումն է՝ կայուն զարգացման դրույթներին համապատասխան: Ըստ հեղինակի բնորոշման՝ *մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացում նշանակում է բնապահպանական բաղադրիչի ելակետային ապահովման պայմաններում բարձր*

արդյունավետությամբ փնտեսական զարգացում, որն իրական հիմքեր կստեղծի սոցիալական բաղադրիչի պատշաճ իրականացման համար:

✓ Երկրում արտադրված մետալուրգիական արտադրանքները արտադրական շրթայի առավել բարձր արտադրողական փուլերում գրեթե չեն օգտագործվում՝ չստեղծելով մեծ ավելացված արժեքներ և արդյունքում ոլորտն ունի իր տնտեսական ներուժից փոքր փաստացի մասնաբաժին մակրոտնտեսական ցուցանիշներում: 2020թ-ին մետալուրգիական արդյունաբերության մասնաբաժինը մշակող արդյունաբերությունում կազմել է 14,9%, արդյունաբերությունում՝ 10,0%, իսկ ՀՆԱ-ում՝ 3,4%: Նույն ցուցանիշը 2021թ-ին մետալուրգիական արդյունաբերության ծավալների 6 %-ով նվազման տեմպի պատճառով կազմել է համապատասխանաբար 13%, 8,2% և 2,8%:

✓ Ոլորտի մակրոտնտեսական բացարձակ ցուցանիշների ցանկում որոշակի իմաստով տնտեսական արդյունավետությունը բնութագրող ցուցանիշ է հանդիսանում պետական բյուջե մուծվող հարկերի և այլ վճարների մեծությունը: Մետալուրգիական ընկերությունները գործում են հարկային ընդհանուր դաշտում, օգտվում են համընդհանուր գործող արտոնություններից (հիմնականում արտահանման դեպքում ԱԱՀ-ի հետ վերադարձից): Վերջին տասնամյակում ոլորտի ընկերությունները պարբերաբար հայտնվել են Հայաստանի խոշոր հարկատուների 1000 առաջին ընկերությունների ցանկում և պետական բյուջե վճարել նշանակալից մեծությամբ հարկեր և այլ վճարներ: Խոշոր հարկ վճարող մետալուրգիական ընկերությունների կողմից 2021թ-ին վճարված հարկերի և վճարների գումարը կազմել է 40312 մլն դրամ, որը կազմել է պետական բյուջեի հարկային մուտքերի 2,54%-ը: Նկատենք, որ բոլոր խոշոր հարկատուներն էլ վճարել են շահութահարկ, այսինքն՝ հարկվող շահույթը եղել է դրական, չնայած քովիդի հետևանքով ոլորտի կրած որոշ տնտեսաֆինանսական հետևանքներին: Ոլորտը շարունակում է մնալ եկամտաբեր, որը ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է հիմնականում երկարաժամկետ կտրվածքով մետաղների գների պարբերական աճով:

✓ ՀՀ արտահանման կառուցվածքում մետալուրգիական արտադրանքներից ամենամեծ մասնաբաժին ունի ֆերոմոլիբդենը: 2021թ. տվյալներով ՀՀ-ից արտահանվել է 8159,2 տոննա ֆերոմոլիբդեն, որը կազմել է 188739,2 հազ. ԱՄՆ դոլար և ապահովել 4-րդ տեղն արտահանման ցանկում: ՀՀ-ում պողպատածուլության և պողպատից արտադրատեսակներ արտադրող արտադրությունների զարգացումը կարող է նպաստել մոլիբդենի արժեքային շրթայի երկարացմանը և ոլորտի կայունության բարձրացմանը: Մոլիբդենի խտանյութի հայրենական արտադրության վերջին 5 տարիների ընթացքում կրկնապատկված ծավալների հումքային ապահովվածությունը հիմք են տալիս եզրակացնելու, որ մոլիբդենի վերամշակմամբ զբաղվող գործող հիմնական ընկերությունների հզորությունների բարձրացման կամ նոր գործարանների կայուն զարգացման սկզբունքներով գործարկումը իրական ներուժ է հայրենական մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման համար:

✓ Թանկարժեք մետաղների համաշխարհային արտադրության մեջ Հայաստանի մասնաբաժինը կազմում է 0,08%: ՀՀ-ից 2021թ. արտահանվել է

3776,3 կգ ոսկի, իսկ ներմուծվել է 1560 կգ: Երկրից ոսկին արտահանվում է ոսկու և արծաթի Դորե համաձուլվածքի և ոսկու բազմամետաղային խտանյութի ապրանքատեսակներով, իսկ ներմուծվում է ոսկու մաքուր ծուլակտորի ձևով՝ որպես հումք՝ հիմնականում ոսկերչության մեջ ոսկյա իրերի պատրաստման համար: Այս ոլորտում հեռանկարն է՝ ստանալ ոսկու մաքուր ծուլակտորներ և սեփական հումքով զարգացնել Հայաստանի համար ավանդական ճյուղը՝ ոսկերչությունը, ինչպես նաև հանդես գալ մաքուր մետաղ արտադրողի և արտահանողի տնտեսապես շահավետ կարգավիճակում:

✓ Համաշխարհային և հայրենական մետալուրգիական արդյունաբերությունը կարևոր դերակատարություն ունենալով տնտեսական հզորացման և սոցիալական ապահովության ոլորտներում ու այդպիսով նպաստելով կայուն զարգացմանը՝ միևնույն ժամանակ շրջակա միջավայրը ինտենսիվ աղտոտող ճյուղերից է: Հեղինակը ելնելով կայուն զարգացման սկզբունքներից հարում է ոլորտում այն տնտեսաէկոլոգիական քաղաքականության և համապատասխան տնտեսաիրավական գործիքների կիրառությանը, որոնք բացառում են էկոլոգիական խնդիրների առաջացումը կիրառվող տեխնոլոգիական գործընթացի մակարդակով: Տնտեսվարողների ապահովագրված և բարձր շահույթների ստացման նպատակով ցածրարժեք ոչ էկոլոգիական տեխնոլոգիաների կիրառումը անհրաժեշտ է բացառել այդպիսի ծրագրերին համապատասխան պետական կառույցների կողմից թույլտվություններ և լիցենզիաներ չտրամադրելու փուլում, քանի որ կանխարգելիչ քաղաքականությունն իր տնտեսաէկոլոգիական արդյունավետությամբ գերազանցում է հետևանքների (այս ոլորտում հաճախ անդառնալի) վերացման «տուգանային» համակարգին:

✓ Մետալուրգիական գործարանների հզորացումը, նորերի կառուցումը էկոլոգիական բաղադրիչի առնվազն չվատթարացման պայմաններում նույնիսկ սահմանային եկամտաբերության պայմաններում նպաստում են սոցիալական բաղադրիչի իրականացման բարելավմանը՝ նոր աշխատատեղեր, աղքատության նվազում, մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման արդյունքում եկամուտների վերաբաշխում, այլ եկամտաբեր արտադրությունների համար հենքի ստեղծում և այլն:

✓ Մետալուրգիական արդյունաբերությունը գործ ունի չվերականգնվող ռեսուրսների՝ մետաղների հետ, իսկ բնական ռեսուրսները հանդիսանում են հարստություն, ինչպես ներկա, այնպես էլ ապագա սերունդների համար: Ներկա սերունդների պահանջմունքների բավարարումը և միաժամանակ ապագա սերունդների համար չվերականգնվող ռեսուրսների նկատմամբ պահանջմունքների բավարարման հնարավորությունը չփոքրացնելը տնտեսական և սոցիալական կայունության ապահովման ժամանակակից արդյունավետ մեխանիզմներ են պահանջում: Հեղինակը գտնում է, որ խնդրի լուծման համար անհրաժեշտ են պետության կողմից կիրառվող այնպիսի մեխանիզմներ և գործիքներ, որոնք մետաղական ռեսուրսներից ստացված հարկային եկամուտները կվերաբաշխեն հասարակության բոլոր անդամների միջև՝ եկամուտների անհավասարության անջրպետի առավելագույն համահարթեցման սկզբունքով: Մետաղներից ստացված

եկամուտները չպետք է սպառվեն ընտրյալների կողմից և միայն ներկա սերնդի կտրվածքով, այլ ապահովեն ներկա և ապագա սերունդների համերաշխության հիմնախնդրի լուծումը: Ուսումնասիրելով համաշխարհային պրակտիկայի դրական փորձը և տեսաբանների մոտեցումները, հեղինակը խնդրի լուծումը տեսնում է այդ եկամուտների մի մասի կենտրոնացմամբ Կայունացման հիմնադրամներում, ինչպես նաև ապագայական կապիտալի՝ կրթության և գիտության մեջ նպատակային ներդրումների ձևով, որոնք թույլ կտան փոխարինել սպառված մետաղի մասի նկատմամբ պահանջունքների բավարարումը՝ մետաղներին փոխարինող նոր տեխնոլոգիաներով և փոխհատուցման արդյունավետ այլ միջոցներով:

✓ Կայուն զարգացումը տնտեսական, էկոլոգիական և սոցիալական եռամիասնությամբ ներդաշնակ զարգացում է և այն գնահատելու, չափելու համար անհրաժեշտ են այնպիսի ցուցանիշներ, որոնք կարտացոլեն կայուն զարգացման բոլոր բաղադրիչները: Այդպիսի ցուցանիշներ են կայուն զարգացման ինդիկատորները, որոնք թույլ են տալիս դատել տնտեսական, սոցիալական կամ բնապահպանական փոփոխականի վիճակի կամ փոփոխության մասին: Համաշխարհային բանկի կողմից հաշվարկված 1 շնչի հաշվով ճշգրտված ՀԱԵ ինդիկատորի և 1 շնչի հաշվով ավանդական ՀԱԵ ցուցանիշի տարբերությունների վերլուծությունը ցույց է տալիս Հայաստանի անկայուն զարգացման միտումների մասին՝ պայմանավորված բնական ռեսուրսների հյուծմամբ, որը երկարաժամկետ կտրվածքով կբերի բարեկեցության վատթարացմանը: Հեղինակը փորձել է Համաշխարհային բանկի առաջարկած մեթոդաբանության սկզբունքներով, որը հիմնված է շրջակա միջավայրի աղտոտման էկոտնտեսական վնասը հաշվի առնելու մոտեցման վրա՝ մշակել մետալուրգիական արդյունաբերության ձեռնարկությունների և ոլորտի կայուն զարգացումը բնութագրող «կանաչ» ինդիկատոր, որը հնարավորություն է տալիս գնահատել կայուն զարգացման մակարդակն ըստ տնտեսական, էկոլոգիական և սոցիալական բաղադրիչների:

✓ ՀՀ ժամանակակից տնտեսության համար պղինձը շարունակում է ունենալ թիվ առաջին մետաղի նշանակությունը տնտեսության վրա ունեցած նշանակալից ազդեցությամբ: Հայաստանը տիրապետում է աշխարհի պղնձի պաշարների 1%-ին, սակայն տնտեսաէկոլոգիական պատճառներով Ալավերդու միակ պղնձաձուլարանի փակման պատճառով ներկայումս պղնձաձուլության բնօրրան հանդիսացող երկրում արդյունահանված պղինձը խտանյութի ձևով ամբողջությամբ արտահանվում է՝ զբաղեցնելով առաջատարի տեղը ՀՀ արտահանման կառուցվածքում: Արդյունքում պղնձի վերամշակման շղթայում ավելի բարձր ավելացված արժեքով արտադրանք չի թողարկվում և երկիրը զրկվում է պոտենցիալ եկամուտներից և արդյունքներից:

✓ Արտադրության և արտահանման կառուցվածքում հումքի փոխարեն վերջնարդյունք ստանալու երկրի ծրագրերից մեկը տարեկան 100000 տոննա կաթոդային պղնձի արտադրության կազմակերպումն է: Տեխնոլոգիական ելակետային հաշվարկներով նման հզորությամբ պղնձաձուլարանի տեղական 24-25%-ոց պղնձի խտանյութի հումքով աշխատելու դեպքում տարեկան միջին հաշվով անհրաժեշտ է 400-430 հազ. տոննա պղնձի խտանյութ: 2018-2021թթ.

Հայաստանում արտադրված պղնձի խտանյութի ծավալների դինամիկայի հիման վրա կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պղնձի խտանյութի արտադրության ծավալները առաջիկա 3 տարիներին կգերազանցեն 430 հազ. տոննայի նշագիծը: Հիմնավորվում է տեղական հումքով պղնձի արտադրության կազմակերպման հումքային ապահովվածության հնարավորությունը:

✓ ՀՀ-ում պղնձի արտադրության էկոլոգիապես անվտանգ շահագործման հիմնական խնդիրներից մեկը պայմանավորված է պղնձի ստացման տեխնոլոգիայով: Պղնձի ստացումը ըստ հիմնական տեխնոլոգիական գործընթացի բաժանվում է պիրոմետալուրգիայի և հիդրոմետալուրգիայի: Պիրոմետալուրգիական եղանակի դեպքում պղնձի ստացման տեխնոլոգիական վերջնարդյունքներից մեկը ծծմբական թթուն է: 1 տոննա կաթոդային պղինձ ստանալու դեպքում առաջանում է միջինում 4 տոննա ծծմբական թթու, իսկ 100 հազ. տոննա կաթոդային պղնձի արտադրության դեպքում կստացվի տարեկան 400 հազ. տոննա ծծմբական թթու: Այսպիսի քանակությամբ առաջացած ծծմբական թթվի հետագա պահպանությունը, տեղափոխումը, իրացումը լուրջ էկոլոգիական, տրանսպորտային լոգիստիկ և մարքեթինգային խնդիր է և առայժմ վերջնական լուծում չի գտել:

✓ Պղնձի արտադրության կազմակերպման հիդրոմետալուրգիական տեխնոլոգիայով հնարավոր է ծծմբական թթվի փոխարեն արտադրության վերջնարդյունքում ստանալ տարրական ծծումբ: Շեշտենք, որ ի տարբերություն պիրոմետալուրգիայի՝ հիդրոմետալուրգիան ավելի էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիա է, որի կիրառման առավելություններից մեկը խտանյութում առկա ծծմբի ոչ թե արտանետումն է, այլ փակ ցիկլով օգտագործումը, և ծծմբի խնդրի լուծումը խիստ կարևոր և դրական գործոն է հանդիսանում: Հիդրոմետալուրգիական տեխնոլոգիայով 100 հազ. տոննա կաթոդային պղնձի արտադրության դեպքում առաջանում է 130 հազ. տոննա ծծումբ: Վերջինիս տեղափոխումն արդեն պարտադիր չէ երկաթուղով, այն կարելի է տեղափոխել նաև ավտոտրանսպորտի միջոցով: Պղնձի արտադրության ծծմբի ելքով տարբերակի դեպքում խնդիրը հանգում է արտադրված ծծմբի պաշարներից «ազատվելուն», որը պայմանավորված է ծծմբի համաշխարհային շուկայում պահանջարկի նկատմամբ առաջարկի գերազանցմամբ: Հեղինակը խնդրի լուծման տարբերակ է առաջարկել համաշխարհային պրակտիկայում նման իրավիճակներում արդարացված լուծումներից մեկը, որի դեպքում «եկամտային» հողվածը վերածվում է «ծախսային» հողվածի: Արտադրողը ծծումբը «նվիրում է» գնորդին՝ զիջելով նրան շահույթի մի մասը, սակայն փոխարենը հնարավորություն է ստանում իրականացնել անընդհատ արտադրական գործունեություն՝ ազատվելով իրացվելիություն չունեցող պաշարներից:

✓ Կաթոդային պղնձի արտադրության ծրագրի իրականացման արդյունքում հաշվարկված պոտենցիալ մակրոտնտեսական ցուցանիշների նշանակալից դրական փոփոխությունը հիմնավորում է Հայաստանում պղնձի արտադրության կազմակերպման տնտեսական նպատակահարմարության մասին: Այն կարևոր հանգամանքը, որ առաջարկվող տեխնոլոգիայի կիրառման դեպքում էկոլոգիական

խնդիրները լուծված են տեխնոլոգիական մակարդակով և շրջակա միջավայրի վրա ինտեսիվությունը ծրագրի իրականացման դեպքում հասցված է նվազագույնի, ապա ծրագրի կայուն զարգացման էկոլոգիական բաղադրիչի դրույթները նույնպես ընդունելի են: Սոցիալական բաղադրիչի իրացման առումով ծրագրի իրականացումը թույլ կտա ստեղծել 765 աշխատատեղ՝ 376941 դրամ միջին աշխատավարձով, որը կմեղմի գործազրկության բարձր մակարդակը Լոռու մարզում և կնպաստի բնակչության եկամուտների մակարդակի բարձրացմանը: Կայուն զարգացման սկզբունքներով կաթողային պղնձի արտադրության ծրագրի իրագործումը կբարձրացնի ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման մակարդակը:

✓ Միայն մաքուր մետաղի արտադրությունը չի կարող էապես նպաստել երկրի տնտեսական հզորության աճին և կտրուկ բարձրացնել միկրո և մակրո տնտեսական ցուցանիշների մակարդակը: Ավելացված արժեքի շրթայի մեկ փուլի ավելացումը մաքուր մետաղի ստացման վերջնարդյունքով միայն իրական նախադրյալ է շրթայի առավել բարձր փուլերում բազմապատկված ավելացված արժեքներ ստանալու համար: Սա նշանակում է, որ վերջնանպատակը պետք է լինի ոչ թե միայն մաքուր մետաղի ստացումը, այլ դրա արտադրության հենքի վրա տնտեսության այլ ճյուղերի զարգացումը, հակառակ դեպքում Հայաստանը իր վրա վերցնելով մետաղի վերջնական փուլերի արտադրության բարձր էկոլոգիական ռիսկերը, կշարունակի մնալ հումքային ուղղվածության երկիր՝ ցածր տնտեսական արդյունքներով: Երկրի ընդերքի հարստությունների շահագործման մուլտիպլիկատիվ արդյունքների օգտվողները կշարունակեն լինել հայկական հումքը օգտագործող օտարերկրյա ներկրողները, իսկ Հայաստանը մեծ արագությամբ դատարկելով ընդերքի հարստությունները և ստեղծելով լուրջ բնապահպանական հիմնախնդիրներ ներկա և ապագա սերունդների համար՝ չի ապահովի իրական տնտեսական և սոցիալական զարգացում:

✓ Ռեսուրսախնայող և սակավաթափոն մետալուրգիական տեխնոլոգիաների միջոցով մաքուր պղնձի ստացումը իրական նախադրյալներ կստեղծի Հայաստանում էլեկտրահաղորդիչների, էլեկտրոնիկայի, ռազմական և վերամշակող արդյունաբերության, սարքաշինության, ռոբոտաշինության և բարձր տեխնոլոգիաների ոլորտների, սպառողական ապրանքների, ինչպես նաև աշխարհում բարձր պահանջարկ վայելող էլեկտրոմոբիլների արտադրության զարգացման համար: Պղնձի և այլ մետաղների արտադրության հենքի վրա զարգացող այս ճյուղերը կարող են ապահովել մեծ ավելացված արժեքներ և տնտեսական բարձր արդյունավետություն: Նշված բնագավառների գերակշռող մասն ունեն արտահանման ուղղվածություն և երկրի հումքային կցորդի դերակատարությունը կարող են փոխարինել բարձրարժեք պատրաստի արտադրանքներ արտահանող երկրի կարգավիճակով: Ստեղծվող աշխատատեղերը, ստացված եկամուտները, պետության կողմից ոլորտից ստացված հարկային եկամուտների վերաբաշխումը, ընկերությունների սոցիալական ծրագրերը կնպաստեն կայուն զարգացման սոցիալական գործոնի իրացմանը: Սա է մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման

պտտենցիալ ուղիներից մեկը, որն ապահովելու համար անհրաժեշտ է տնտեսական, հարկային, ներդրումային համապատասխան քաղաքականությունների մշակում և գործուն տնտեսական մեխանիզմների միջոցով իրագործման ապահովում:

✓ Հարկ ելք համարում շեշտել այն հանգամանքը, որ Հայաստանը, լինելով տարածաշրջանի պղնձի պաշարներով (համաշխարհային պաշարների 1%) և արտադրվող ու արտահանվող պղնձի խտանյութի ծավալներով առաջատար երկիրը, դեռևս շարունակում է ներկրել որոշակի տեսակի մալուխներ Թուրքիայից, որտեղ արտադրվում են գերակշռ մասով ներկրվող հումքից տարբեր տեսակի մալուխներ և բավարարում ոչ միայն ներքին բարձր պահանջարկը, այլև արտահանում տարածաշրջանի երկրներ: Վերոնշյալը ցույց է տալիս այն մտահոգիչ փաստը, որ Հայաստանը դեռևս չի օգտագործում իր համեմատական առավելությունները միջազգային շուկայում, չնայած տիրապետում է հումքային տնտեսական անհրաժեշտ ներուժի: Կաթոդային պղնձի արտադրության կազմակերպումը Հայաստանում կարող է նշանակալից չափով նպաստել մալուխի հայրենական շուկայի զարգացմանը և համապատասխան տնտեսական քաղաքականության և մեխանիզմների իրականացման միջոցով այս ուղղությունը մեծ ներուժ ունի դառնալու արտահանման առաջատար ուղղություններից մեկը:

✓ ՀՀ Հարկային Օրենսգրքով ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների և գործառնությունների ցանկից փոխյին եղանակով առաջարկվում է նախ հանել մետաղական շրջափուլի հումքային արտադրատեսակների՝ հանքաքարի և խտանյութի արտահանումը, միաժամանակ պահպանելով արտոնությունը առաջին 5 տարիներին մետալուրգիական միջանկյալ արտադրանքների նկատմամբ (ֆերոմոլիբդեն, ոսկու և արծաթի պարունակությամբ Դորե համաձուլվածք և մետալուրգիական այլ միջանկյալ արտադրանքներ): Սկզբնական փուլում մետալուրգիական միջանկյալ արտադրանքների նկատմամբ արտոնության պահպանումը սահմանափակ ժամկետով պայմանավորված է ամբողջական շրջափուլով մետալուրգիական գործարանների ստեղծման և կայացման անհրաժեշտ ժամանակահատվածի նկատառումներով: Հաջորդ փուլում առաջարկվում է արտոնությունը պահպանել միայն մաքուր մետաղի և դրա հենքի վրա զարգացող ճյուղերի կտրվածքով՝ հանելով մետալուրգիական կիսաարտադրանքներն արտոնյալ ցանկից:

✓ ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման ուղղություններից մեկը ժամանակի հրամայականով կդառնան մետալուրգիական կենսատեխնոլոգիաները: Դրանց կիրառումը կարող են տնտեսապես շահավետ դարձնել աղքատ հանքավայրերի և հանարդյունաբերության տեխնածին թափոնների վերամշակման գործընթացները և միաժամանակ լուծել պոչամբարների հետ կապված էկոլոգիական հիմնախնդիրները:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մկրտչյան Ս.Ա., Բախշյան Ս.Մ. /Օգտակար հանածոների նոր պաշարների հետախուզման տնտեսաիրավական խնդիրները Հայաստանում /«Լրաբեր», Գիտական հոդվածների ժողովածու, Հայաստանի ազգային

- պոլիտեխնիկական համալսարան.-Եր.: Ճարտարագետ, 2017.- Մաս 2.- էջ 936-941:
2. Բախշյան Ս.Ս. /«Կանաչ տնտեսության» հայկական մոդելը /«Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, թիվ 9-10 (205-206) 2017.- էջ 165-167:
 3. Бахшян С.М. SWOT анализ горнодобывающей промышленности Армении /«Аллея Науки», Научно-практический электронный журнал, Томск, Выпуск №4(20), том 1, апрель, 2018.- стр. 67-69. (РИНЦ)
 4. Бахшян С.М. Негативное экологическое воздействие горнометаллургической промышленности Армении на окружающую среду /«Аллея Науки», Научно-практический электронный журнал, Томск, Выпуск № 4(20) том 3, апрель, 2018.- стр. 40-43. (РИНЦ)
 5. Մանուկյան Ս.Ֆ., Բախշյան Ս.Ս. /Հայաստանի հարևան երկրների տնտեսությունների ներկա գործընթացները և հիմնախնդիրները /«Տարածաշրջան և աշխարհ», «Регион и мир», научно-аналитический журнал, Ер., изд.: Общественный институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона, том IX, № 3, 2018.- стр. 74-86. (РИНЦ)
 6. Մանուկյան Ս.Ֆ., Բախշյան Ս.Ս. /Համաշխարհային տնտեսությունը 2017թ-ին. գործընթացներ և զարգացումներ (անալիտիկ հայացք) /«Տարածաշրջան և աշխարհ», «Регион и мир», научно-аналитический журнал, Ер., изд.: Общественный институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона, том IX, № 3, 2018.- стр. 87-96. (РИНЦ)
 7. Բախշյան Ս.Ս. /ՀՀ ցեմենտի շուկայի զարգացման միտումները /«Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Գիտական հոդվածների ժողովածու-2018, Մաս I: ՀՀ ԳԱԱ Ս. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հր., 2018.- էջ 63-67:
 8. Мкртчян С.А., Бахшян С. М. /Проблемы устойчивого развития горно-металлургической отрасли Армении /Стратегии противодействия угрозам экономической безопасности России: материалы II Всероссийского форума по экономической безопасности, Тамбов, 5–6 июня 2019 г.-Тамбов: Издательский центр ФГБОУ ВО "Тамбовский государственный технический университет", 2019. – Вып. 2, стр. 10-14. (РИНЦ)
 9. Bakhshyan S.M. /Financial risk measurement (VaR) //Статистические методы исследования социально-экономических и экологических систем региона: Материалы III Международной научно-практической конференции, Тамбов, 30–31 октября 2019г.–Тамбов: Издательский центр ФГБОУ ВО "Тамбовский государственный технический университет", 2020.–Выпуск 3, том II.- стр. 162-166. (РИНЦ)
 10. Мкртчян С.А., Бахшян С. М. /Применение модели Дасгупты-Хилла-Солоу-Стиглица (DHSS) для оценки устойчивости отрасли на примере Армении/ Статистические методы исследования социально-экономических и экологических систем региона: Материалы III Международной научно-

- практической конференции, Тамбов, 30–31 октября 2019 г. – Тамбов: Издательский центр ФГБОУ ВО "Тамбовский государственный технический университет", 2019. – Выпуск 3, том I, стр. 181-187. (РИНЦ)
11. Мкртчян С.А., Бахсян С.М., Гульян К.А. /Индикаторы устойчивого развития (скорректированный чистый национальный доход) /Исследование социально-экономического развития территорий в условиях санкций и угроз глобальных вызовов: Материалы I Всероссийской научно-практической конференции (с международным участием), Тамбов, 20–22 мая 2020 г.–Тамбов: Издательский центр ФГБОУ ВО "Тамбовский государственный технический университет", 2020. –Выпуск 1, том II, стр. 62-67. (РИНЦ)
 12. Мкртчян С.А., Бахсян С.М., Алавердян Л.А., Оганесян А.М. /Основные тенденции макроэкономических показателей Республики Армении в условиях существующих угроз /Исследование социально-экономического развития территорий в условиях санкций и угроз глобальных вызовов: Материалы II Всероссийской научно-практической конференции с международным участием, Тамбов, 12–14 мая 2021 г.–Тамбов: Издательский центр ФГБОУ ВО "Тамбовский государственный технический университет", 2021– Выпуск 2, стр. 74-80. (РИНЦ)
 13. Մկրտչյան Ս.Ա., Ալավերդյան Լ.Ա., Բախշյան Ս.Մ., Ղուլյան Կ.Ա. /Լեռնամետալուրգիական ընկերության արտադրանքի արտադրության և իրացման վերլուծություն/ «Լրաբեր», Գիտական հոդվածների ժողովածու, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան.-Եր.: Ճարտարագետ, 2022.-Մաս 2.- էջ 486-500:
 14. Մկրտչյան Ս.Ա., Ալավերդյան Լ.Ա., Տավարացյան Մ.Գ., Բախշյան Ս.Մ., Բաղասյան Ա.Ա. /Լեռնամետալուրգիական ընկերության ֆինանսատնտեսական ցուցանիշների բարելավման ուղիները/ «Լրաբեր», Գիտական հոդվածների ժողովածու, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան.-Եր.: Ճարտարագետ, 2022. - Մաս 2.- էջ 501-514:
 15. Мкртчян С.А., Бахсян С.М., Бондарская Т.А., Бондарская О.В. /Устойчивое развитие: проблемы, перспективы/ «Լրաբեր», Գիտական հոդվածների ժողովածու, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան.-Եր.: Ճարտարագետ, 2022, էջ 523-529:
 16. Բախշյան Ս.Մ. /« մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման խնդիրները/«Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Գիտական հոդվածների ժողովածու-2022, №1: /«ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ»- Եր., 2022.- էջ 252-268

БАХШЯН САСУН МЯСНИКОВИЧ

ПРОБЛЕМЫ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ МЕТАЛЛУРГИЧЕСКОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – «Экономика, управление народным хозяйством и его отраслями».

Защита диссертации состоится 28-ого апреля 2023г. в 15:00, на заседании Специализированного совета 015 ВАК Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Х.Абовяна 52

Р Е З Ю М Е

В контексте современных геополитических и экономических вызовов экономическое укрепление нашей страны является велением времени, что делает важным акцент на рациональное использование и развитие имеющегося потенциала металлургической отрасли. Известно, что металлургическая промышленность является одной из отраслей с наибольшим негативным воздействием на окружающую среду, поэтому ее долгосрочное и эффективное развитие реально только при соблюдении положений концепции устойчивого развития, т.е. комплексное развитие экономической, экологической и социальной составляющих устойчивого развития.

Выявление проблем отрасли, разработка соответствующей экономической политики и механизмов, способствующих их решению, разработка обоснованных с точки зрения экономического, экологического и социального комплекса программ металлургических производств сделает ощутимым устойчивое развитие металлургической промышленности РА. Вышесказанным, а также многими другими факторами, обусловлена актуальность темы диссертации.

Цель исследования - выявить проблемы устойчивого развития металлургической промышленности Республики Армения, разработать и наметить пути их решения.

Для достижения поставленной цели были предложены и решены следующие задачи:

- оценить значение, место, роль, минерально-сырьевую базу устойчивого развития металлургической промышленности РА;
- проанализировать экономическую, экологическую и социальную составляющие устойчивого развития металлургической промышленности РА;
- рассмотреть вопрос устойчивого развития металлургической промышленности РА на уровне микро- и макросреды, выявить сильные и слабые стороны отрасли, существующие проблемы, эффективные пути их решения;

- разработать индикатор, характеризующий устойчивое развитие металлургической отрасли;
- определить одно из основных направлений устойчивого развития металлургической промышленности РА – эколого-экономические основы организации производства меди, основные препятствия и проблемы, предложить конкретные и оправданные в международной практике решения;
- провести экономическую оценку проекта производства меди по экологически чистой технологии (комплексное извлечение металлов), рассчитать прогнозируемое макроэкономическое потенциальное воздействие проекта;
- разработать поэтапный способ усовершенствования действующего налогового механизма на НДС с целью улучшения устойчивого развития металлургической промышленности РА, что будет способствовать развитию производства конечного металлургического продукта.

В результате исследования получены результаты, имеющие научное и практическое значение, научная новизна которых заключается в следующем:

1. разработан интегральный индикатор, характеризующий устойчивое развитие металлургической промышленности РА;
2. обоснованы проблемы устойчивого развития металлургической промышленности РА и пути их решения с акцентом на производство меди, проведена экономическая оценка проекта производства меди по экологически чистой технологии (с комплексным извлечением металлов), рассчитано макроэкономическое потенциальное влияние проекта;
3. предложено решение одного из основных эколого-экономических препятствий в организации производства меди в РА – маркетинговой логистической задачи реализации серы;
4. в целях улучшения устойчивого развития металлургической промышленности РА разработан поэтапный способ усовершенствования действующего налогового механизма на НДС, который будет способствовать производству конечной металлургической продукции.

BAKSHYAN SASUN MYASNIK

PROBLEMS WITH SUSTAINABLE DEVELOPMENT OF THE METALLURGICAL INDUSTRY IN THE REPUBLIC OF ARMENIA

The dissertation is submitted for pursuing a Ph.D. degree in Economic Sciences in the field 08.00.02 “Economics, Management of the Economy and its Branches”

The defense of the dissertation will take place at 15:00 April 28, 2023, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University, by address: 0025, Yerevan, 52 Abovyan st.

ABSTRACT

In the context of the current geopolitical and economic challenges, the economic strengthening of RA is an imperative of the time, which emphasizes the rational use and development of the existing potential of the country’s metallurgical industry. The metallurgical industry is also known to be one of the branches with the greatest negative impact on the environment, so its long-term and effective development is only realistic with the provision of concepts of sustainable development, that is, with complementary and complex development of economic, ecological and social components of sustainable development.

Identification of the problems of the sector, development of appropriate economic policies and mechanisms contributing to the solution of the problems, and development of programs justified from the joint economic, ecological, and social point of view of metallurgical productions will make the sustainable development of the RA metallurgical industry tangible. The factors mentioned above, as well as many others, determine the relevance of the dissertation topic.

The purpose of the research is to identify the problems of sustainable development of the metallurgical industry in the Republic of Armenia and develop as well as outline ways to solve them.

To achieve the stated goal, the following problems have been proposed and solved:

- to evaluate the significance, place, role, and mineral base of development of the metallurgical industry in RA,
- to analyze the economic, ecological, and social components of the sustainable development of the metallurgical industry in RA,
- to consider the issue at the levels of micro and macro environments of sustainable development of the metallurgical industry in RA, identify the strengths and weaknesses of the sector, the existing problems, effective ways of solving them,
- to develop an indicator characterizing the sustainable development of the metallurgical industry,

- to identify one of the main directions of sustainable development of the metallurgical industry in RA - the ecological and economic bases of the organization of copper production, the main obstacles and problems and propose specific and internationally justified solutions for them,
- to carry out an economic assessment of the project of copper production with environmentally friendly technology (complex extraction of metals), calculate the predicted macroeconomic potential impact of the project,
- to develop a phased way to improve the current tax mechanism of value added tax in order to improve the sustainable development of the metallurgical industry in RA, which will contribute to the promotion of production of the metallurgical end result, pure metal and products made from it.

The main scientific results of the research are of theoretical and practical importance, the scientific novelty of which is as follows:

1. An integral indicator characterizing the sustainable development of the metallurgical industry in RA is developed.
2. The problems of sustainable development of the metallurgical industry in RA and the ways to solve them with an emphasis on copper production have been established, an economic evaluation of the copper production project with environmentally friendly technology (with complex extraction of metals) has been carried out, the macro-economic potential impact of the project has been calculated.
3. A solution to one of the main ecological and economic obstacles to the organization of copper production in RA, the marketing logistics problem of sulfur sales has been proposed.
4. In order to improve the sustainable development of the metallurgical industry in RA, a phased way to improve the existing tax mechanism of value added tax has been developed, which will promote the production of metallurgical end products.

